ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1915 ԹՎԱԿԱՆԻՆ

Ռ. Օ. ՍԱՀԱԿՅԱՆ

1915 թվականը օրհասական եղավ հայ ժողովրդի համար։ Երիտթուրքերի կառավարությունը սկսեց Օսմանյան կայսրության հայ բնակչության բռնագաղթն ու զանգվածային կոտորածները։ Դործի դրվեցին կանոնավոր բանակը, ոստիկանական ստորաբաժանումները, քրդական և ավազակային այլ ջոկատները։ Այդ պայմաններում արևմտահայության մի հատվածը կարողացավ զենքը ձեռքին դիմադրավել ջարդարարներին։ Ինքնապաշտպանության դիմեցին Մուշ-Սասունում, Շապին Գարահիսարում, Ֆընտըճագում, Սուեդիայում, Ուրֆայում և այլ վայրերում։

Երիտթուրք ջարդարարների դեմ առաջին դիմադրական մարտերը տեղի են ունենում Վանի վիլայեթում և Վան քաղաքում։ Այստեղ, դեռևս 1914 թ. օգոստոսին, վիլայեթի վալի (նահանգապետ) էր նշանակվել Ջևդեթ բեյը։ Նրան հանձնարարված էր իրագործել Վասպուրականի հայության ոչնչացումը։ Վիլայեթի հայկական գյուղերի վրա հարձակումները սկսվում են 1914 թ. վերջերին[1]։ Մի քանի գյուղեր միավորելով ինքնապաշտպանական ուժերը, կարողանում են հակահարված տալ քրդական ջոկատներին։ Երիտթուրքական իշխանությունները նման անսպասելի ուժեղ դիմադրությունից անհանգստացած և դեռ բավարար ուժեր չունենալով խնդրում են Վան քաղաքից օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վռամյանին (Օնիկ Դերձակյան) միջնորդել կռիվները դադարեցնելու համար։ Բախումները դադարում են[2]։ Սակայն իշխանությունները, նոր ուժեր կենտրոնացնելով, վերսկսում են իրենց հարձակումները վիլայեթի հայկական բնակավայրերի վրա։ Այսպես, 1915 թ. փետրվարի 13-ին հրոսակների մի ջոկատ գրոհում է Արճեշ գավառի Առեն գյուղը։ Գյուղացիները դիմադրություն կազմակերպելով պարտության են մատնում ելուզակներին։ Վերջիններս 18 սպանված տալով փախուստի են դիմում[3]։ Իհարկե, միշտ չէր, որ հայերը ի վիճակի էին լինում դիմագրավել թշնամուն։ Վիլայեթի մի շարք վայրերում, չնայած հայ մարտիկների հերոսական ինքնապաշտպանությանը, թուրքական գերազանց ուժերն ի վերջո կարողանում են ճեղքել հայերի պաշտպանությունը և սրի քաշել բնակչությանը[4]։

Վանի վիլայեթում առավել ծանր ինքնապաշտպանական մարտերն ընթանում են Շատախ գավառի կենտրոն հանդիսացող Թաղում։ Այստեղ մարտական գործողություններն սկսվում են 1915 թ. ապրիլի 1-ին։ Շատախցիները կազմակերպում են Զինվորական մարմին, որը գլխավորում է Բաղդիկ

---

1 Հ. Կոսոյան. Վան-բերդաքաղաքի ժողովրդային հերոսապատումը. Թեհրան, 1966, էջ 38։

2 Оборона Вана. 7 апреля—4 мая. М., 1917, с. 16—18.

3 Հ. Կոսոյան. Նշվ. աշխ., էջ 39։

4 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 426, թ. 22։

(Ազատ) Սիմոնյանը։ Հայ մարտիկները 115 հոգի էին[5]։ Նրանք պետք է գիմագրավեին 2000-ից ավելի թուրքական ու քրդական ուժերին[6]։

Հակառակորդը ողջ ապրիլ ամսվա ընթացքում մի շարք գրոհներ է կազմակերպում՝ ձգտելով ճեղքել հայերի պաշտպանությունը, սակայն ապարդյուն։ Անհաջողություն կրելով Թաղում, ջարդարարների ուժերի մի մասը հարձակվում է գավառի անպաշտպան մնացած հայկական գյուղերի վրա, կոտորում քաղաքացիական բնակչությանը, թալանելով նրա ունեցվածքը։ Քչերին է հաջողվում փրկվել ու ապաստանել Թաղում։

Թաղի ինքնապաշտպանության համար բացառիկ նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Մոկսի քուրդ ցեղապետ Մուրթուլլա բեյը ոչ միայն արգելեց տեղի հայության կոտորածը, այլև թույլ չտվեց իր ցեղակիցներին հարձակվել Շատախի վրա[7]։ Ցավոք, նման փաստերը եզակի էին։ Թաղի հայ մարտիկների հաջող դիմադրությունից գազազած, Ջևդեթը շտապում է լրացուցիչ օգնական ուժ և զինամթերք ուղարկել յուրայիններին։ Թուրքական բանակի գերմանական հրահանգիչ և Վանի պաշարմանը մասնակցած Ռ. դր Նոգալեսի վկայությամբ գավառ է ուղարկվում լազերի մեկ գումարտակ և 300 քրդերից բաղկացած մեկ ջոկատ[8]։ Նրանք, չնայած Ռ. դր Նոգալեսի պնդման, Թաղի կռիվներին գրեթե չեն մասնակցում, այլ նախընտրում են հարձակվել գավառի հայկական գյուղերի վրա։

Օգտագործելով իր գերակշռությունը, հակառակորդը օրեցօր աստիճանաբար սեղմում է պաշարման օղակը։ Ինքնապաշտպանության մասնակիցներից մեկի՝ Շ. Աբրիկյանի վկայությամբ «Թաղի դրությունը շատ հուսահատական էր։ Տիրեց սոսկալի վիճակ։ ...Կռվողները, շփոթած, առանց հրամանի այս ու այն կողմ կը վազեին, ժողովուրդը չգիտեր ինչ ընել, ո՞ւր դիմել»[9]։Այդ անկայուն վիճակը բարեբախտաբար երկար չտևեց։ Զինվորական մարմինը, վերախմբավորելով ուժերը և լրացուցիչ ուժեր նետելով պաշտպանության առավել վտանգավոր տեղամասերը, կարողացավ կայունացնել դրությունը։ Թշնամին այս անգամ ևս հետ շպրտվեց։ Նույնիսկ նման պայմաններում, երբ հակառակորդը օրեցօր ուժեղացնում էր ճնշումը հայկական դիրքերի վրա, երբ թուրքական հրետանին անընդմեջ ռմբակոծում էր Թաղը, հայերը չէին կորցնում ոգու արիությունը։ Հայ մարտիկները մի շարք հակագրոհների են դիմում, լուրջ կորուստներ պատճառելով հակառակորդին։ Թաղի ինքնապաշտպանները ձեռնամուխ են լինում սեփական թնդանոթի պատրաստմանը։ Այն իրականացնում են հայր և որդի Նալբանդյանները։ Նրանք կարողանում են պատրաստել երկու թնդանոթ՝ որոնք շատախցիներից մեկի վկայությամբ, «կը քանդեին թուրքերու քարե պատերը բավական մեծ հեռավորության վրա»[10]։

1915 թ. մայիսի 2-ին թշնամին հարձակում է ձեռնարկում Թաղի պաշտպանական դիրքերի վրա։ Հայ մարտիկներին հաջողվում է ուժերի գերագույն լարումով հետ մղել նրանց։ Դրանից հետո հակառակորդի հարձակումների թափը սկսում է աստիճանաբար թուլանալ։ Լուրեր են հասնում, որ ռուսական բանակը և հայ կամավորական ջոկատները մտել են Վան։ Ինքնապաշտպանները որոշում են ստուգել այդ և դիմում են խորամանկության։ Կեսգի-

---

5 Ա—Դո. Մեծ գեպքեր Վասպուրականում 1914—1915 թթ. Երևան, 1917, էջ 372։ Վասպուրական. Վան-Վասպուրականի տասնհինգամյակին առթիվ, 1915—1930. Վենետիկ, Ս. Ղազար. 1930, էջ 66։

6 Վասպուրական. Վան-Վասպուրականի տասնհինգամյակին առթիվ, էջ 66։

7 C. D. Ussher, G. H. Knapp. An American Physician in Turkey. Boston and New York. 1917, p. 265.

8 R. de Nogales. Four Years Beneath the Crescent. New York, 1926, p. 82.

9 «Վան-Տոսպ», Թիֆլիս, 5 հունիսի 1916, էջ 13։

10 «Վան-Տոսպ», 28 ապրիլի 1916, էջ 9։ Տե՛ս նաև՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1 գ. 403, թ. 23։

շերին, նրանք հանկարծ հնչեցնում են ռազմական փողը և եկեղեցու զանգերը։ Միաժամանակ երեք համազարկ է տրվում, ասես ողջունում են ռուսական բանակին։ Թաղը շրջապատած թշնամին սարսափահար փախչում է։ Մայիսի 14-ին հայ կամավորական ջոկատը Դրոյի (Դրաստամատ Կանայան) հրամանատարությամբ մտնում է Թաղ։ Մոտ մեկ ու կես ամիս տևած մարտերի ընթացքում ինքնապաշտպանների կորուստը կազմում էր 150—160, իսկ հակառակորդինը՝ 500—600 հոգի[11]։

Կատաղի կռիվներ են ծավալվում նաև Գավաշ գավառակում։ Այն բաժանվում է 6—7 պաշտպանական շրջանների։ Ինքնապաշտպանությունը գլխավորում է երիտասարդ ուսուցիչ Աբրահամ Դավթյանը[12]։ Հակառակորդի հետ առաջին ընդհարումը տեղի է ունենում 1915 թ. ապրիլի 3-ին։ Մարտերը հատկապես ուժգնանում են ապրիլի վերջերին։ Թշնամին մի քանի կատաղի գրոհ է ձեռնարկում հայկական դիրքերի վրա։ Հայ մարտիկները, տեղի տալով, ստիպված են լինում լքել մի շարք դիրքեր։ Զգացնել է տալիս կռվող ուժի, զենքի ու զինամթերքի սղությունը։ Ինքնապաշտպաններին հաջողվում է կապ հաստատել Վանի հետ[13], բայց դրությունը մնում էր սպառնալից։ Եթե հակառակորդի հարձակումները անընդհատ բնույթ կրեին, ապա ինքնապաշտպանները ի վիճակի չէին լինի երկար դիմանալ։ Պատճառը զինամթերքի պակասն էր։ Ի բարեբախտություն գավաշցիների, Շատախը և գլխավորապես Վանը իրենց վրա էին բևեռել իշխանությունների հիմնական ուժերը։ Իսկ այստեղ, հայերի դիմադրության ճնշումը հանձնարարված էր ոստիկանական և քրդական ելուզակային ջոկատներին, որոնք փոքր-ինչ դիմադրության դեպքում գերադասում էին չվտանգել իրենց կյանքը և ձեռնպահ էին մնում որևէ ակտիվ գործողությունից։ Ի վերջո Վանի ազատագրումը հնարավորություն է տալիս վերացնել նաև Գավաշի պաշարումը։

Ինքնապաշտպանական մարտեր են տեղի ունենում նաև Վարագա վանքի շրջանում։ Վանքը գտնվում էր համանուն լեռան վրա, նրա երկու գագաթների միջև։ Լեռան հյուսիսային և հարավային կողմերից բացվում են խորունկ ձորեր։ Հյուսիսային ձորի մեջ գտնվում էր Ս. Գրիգոր, իսկ արևմտյան գագաթի հարավային լանջին՝ Վարագա վանքը։ Վերջինս ուներ բացառիկ ռազմավարական նշանակություն, քանի որ Վանի հայության ինքնապաշտպանության պարտության դեպքում բնակչությունը կարող էր ապաստանել այստեղ։ Բացի այդ, Վարագա լեռան լանջերով կարելի էր անցնել Պարսկաստան։ Հասկանալով այս ամենը, Ջևդեթը այստեղ էր ուղարկել ժանդարմական ջոկատ, որը գրավելով վանքը սպանել էր այնտեղ գտնվող հոգևորականներին։ Հայկական ինքնապաշտպանական ուժերը կարողանում են վանքից դուրս մղել ժանդարմներին։ Կարճ ժամանակում այստեղ ապաստանում են վիլայեթի զանազան շրջաններից փախած և կոտորածներից փրկված 6000-ից ավելի մարդ[14]։ Վարագա վանքում հավաքված բնակչությունը, ինչպես վկայում է Վանի ինքնապաշտպանության մասնակիցներից Սնիկ Մխիթարյանը, մեծ մասամբ բարոյալքված և հոգնած մի բազմություն էր։ Նրանց մուտքը Վան կարող էր բացասական ազդեցություն գործել քաղաքի հայության վրա։ Ուստի «Արամը (Մանուկյան—Ռ. Ս.) Զինվորական մարմնի հետ, կռվի երկրորդ շաբթուն ձեռնարկեց ամենեն առաջ և ամեն գնով պաշտպանել այդ բազմությունը թրքական վտանգե»[15]։

Այգեստանի Զինվորական մարմնի հրամանով, Շիրին Հակոբյանը մեկնում է Վանից ոչ հեռու գտնվող Շուշանց գյուղը, ինքնապաշտպանություն կազմակերպելու համար։ Նա հավաքում է տեղի ցաքուցրիվ եղած ուժերը,

---

11 Նույն տեղում, 12 հունիսի, էջ 7։

12 «Աշխատանք», Երևան, 13 օգոստոսի 1916։

13 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 419, թ. 21—22, 24։

14 Ա—Դ ո. նշվ. աշխ., էջ 217—218։

15 Օ ն. Մ խ ի թ ա ր յ ա ն. Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 153։

որոնք իրենց հսկողության տակ են վերցնում Դարման-Սղգա գյուղերը և նրանց հարող տարածքը։

1915 թ. ապրիլի 18-ին թուրքական կանոնավոր բանակի ստորաբաժանումները շեշտակի գրոհով գրավում են Սղգա գյուղը։ Այս կորուստը ռազմատագրական եղավ Շուշանցի հետագա պաշտպանության համար։ Հայկական ուժերը փորձ արեցին հետ գրավել գյուղը, սակայն ապարդյուն։ Հակառակորդն այն վեր էր ածել հզոր հենակետի, որտեղից անընդհատ գրոհում և ռմբակոծում էր Շուշանցը։ 1915 թ. ապրիլի 25-ի գիշերը, Ջևդեթի հրամանով, թուրքերը, կենտրոնացնելով գերազանց ուժեր՝ 500 հոգուց բաղկացած հեծելազոր, 1000-ից ավելի հետևակ, երեք թնդանոթ, անցան հարձակման։ Նրանք գլխավոր հարվածը ուղղում են Շուշանցի վրա։ Կարճատև մարտից հետո հայ մարտիկները տեղի են տալիս և նահանջում, թուրքերը գրավում են գյուղը և հրդեհում։ Ապա զարգացնելով հարձակումը, հակառակորդը գրոհում է Ս. Գրիգոր վանքի ուղղությամբ։ Մի քանի օր տևած համառ կռիվներից հետո թշնամին գրավում է Ս. Գրիգոր և Վարագա վանքերը, որոնք հրդեհվում են թուրքերի կողմից։ Այստեղ ապաստանած բնակչությունը մինչ այդ հասցնում է տեղափոխվել Այգեստան[16]։

Երիտթուրք ջարդարարների դեմ գլխավոր ինքնապաշտպանական մարտերը տեղի են ունենում վիլայեթի կենտրոն հանդիսացող Վան քաղաքում։ 1914 թ. սկզբներին Վանում բնակիչների թիվը 41000 էր, որից մոտ 23000 հայ, իսկ 18000՝ մահմեդական։ Հայերը բնակվում էին Այգեստան (20000 մարդ) և Քաղաքամեջ (2500 մարդ) թաղամասերում, որոնք գտնվում էին միմյանցից 5—6 կիլոմետր հեռավորության վրա։ Այդ միջանկյալ տարածքում բնակվում էին մահմեդականներ՝ հիմնականում թուրքեր[17]։

Վիլայեթում սկսված հայերի կոտորածը և հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Վռամյանի ու Իշխանի (Նիկողայոս Պողոսյան) դավադրական սպանությունը հարկադրում են քաղաքի հայությանը ուղիներ փնտրել ջարդից խուսափելու համար։ 1915 թ. ապրիլի 5-ից սկսած քաղաքի արվարձաններում բնակվող հայկական ընտանիքները տեղափոխվում են Այգեստանի ու Քաղաքամեջի կենտրոնական մասերը։ Թաղամասերը Ջևդեթ բեյի հրամանով շրջապատվում են թուրքական զորամասերի կողմից։ Այգեստանի հայությունը փորձում է ամերիկյան միսիոներներ Ք. Աշբրի, Գ. Գնապի և Վանում իտալական հյուպատոսական գործակալ Գ. Սբորդոնիի օգնությամբ վերացնել հայության գլխին կախված վտանգը։ Վանեցիների խնդրանքով նրանք տեսակցում են վալիի հետ։ Սակայն նրանց բոլոր փորձերն ապարդյուն են անցնում։ Ջևդեթը մնում է անհողդողդ վանեցիներին ոչնչացնելու իր մտադրության մեջ։ Բանակցություններից վերադարձած Ք. Աշբրը դիմելով հայերին, ասում է. «Ես կը կարծեմ ձեզի կը մնա պաշտպանել ձեր կյանքը, վասնզի ամեն հույս վերջացած է... և ես բան մը չեմ կրնար ընել, դժբախտաբար... Անշուշտ, անշուշտ, ուրբ տեսք է պաշտպանեք ձեր կյանքը... Հաջողություն»[18]։ Ամերիկացի բժիշկը ինքնապաշտպաններին է տրամադրում ամերիկյան հիվանդանոցի դեղատունը, մերժելով վալիի պահանջը այն հանձնել իշխանություններին[19]։ Իր այդ

---

16 Ա—Դ ո. նշվ. աշխ., էջ 219—220։

17 Վան-Վասպուրականի հերոսամարտը (ժողովածու), կազմ. Հ. Դ. Փափազյան. Երևան, 1990, էջ 19, 45։ Տե՛ս նաև՝ Joh. Lepsius. Der Todesgang des Armenischen Volkes Bericht uber das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges. Potsdam, 1919, S. 87.

18 Օն. Մ խ ի թ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 50։ G. H. Knapp. The Tragedy of Bitlis. Being Mainly the Narratives of Grisel M. McLaren and Myrtel O. Shane. New York, 1919, p. 16; C. D. Ussher, G. H. Knapp. Op cit., pp. 239—240, 245.

19 Ե. Ջարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հ. Ավագյանի ֆոնդ, գործ 8, թերթ 6։

քայլը նա հետևյալ կերպ է բացատրում. «Ցարդ հայոց հետ ենք ապրել, եթե հարկ լինի նրանց հետ էլ կմեռնենք»[20]։ Ք. Աշըրի կինը՝ Էլիզաբեթը, միսիոներներ Է. Ցարոուն, Գ. Կնապը, նմանապես իրենց լուման են ներդնում Այգեստանի պաշտպանության կազմակերպման գործում[21]։

Մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները, վանեցիները վճռում են դիմել ինքնապաշտպանության։ Ապրիլի 5-ին կազմվում է «Վանի ինքնապաշտպանության զինվորական մարմին»։ Վերջինիս կազմում սկզբնապես մտնում են Արմենակ Եկարյանը (արմենական, ռազմական ղեկավար), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան) և Բուլղարացի Գրիգորը (երկուսն էլ դաշնակցական)։ Հետագայում Զինվորական մարմնի կազմում ընդգրկվում են նկարիչ Փանոս Թերլեմեզյանը (անկուսակցական) և Արամ Մանուկյանը (դաշնակցական)[22]։ Ինքնապաշտպանության ղեկավար մարմնի մեջ ընդգրկվում են այնպիսի անձինք, որոնք Վասպուրականի առավել ազդեցիկ ու հեղինակավոր քաղաքացիներն էին։ Կարևորը ոչ թե նրանց այս կամ այն կուսակցության անդամ լինելն էր, այլ այն, որ նրանց ներկայությունը և մասնակցությունը ոգևորում ու քաջալերում էր Այգեստանի բնակիչներին։ Փ. Թերլեմեզյանի վկայությամբ, Ա. Եկարյանը ընտրվեց ռազմական ղեկավար, որովհետև անվախ կռվող էր[23]։ Կայծակ Առաքելը հայտնի էր իր հայդուկային գործունեությամբ Անդրանիկի ֆիդայական խմբում։ Իսկ Բուլղարացի Գրիգորի մասին ինքնապաշտպանության մասնակից Արսեն Կեորկիզյանը վկայում է, որ նա փորձառու զինագործ էր և մեծ աշխատանք կատարեց զինամթերքի պատրաստման աշխատանքները կազմակերպելու գործում[24]։ Քաղաքի պաշարմանը մասնակցած Ռ. դը Նոգալեսը բարձր գնահատական է տալիս Ա. Մանուկյանին, որպես Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից մեկի[25]։ Եվ պատահական չէ, որ Գ. Սբորդոնին Ա. Մանուկյանին համարում է Վանի հայության դիմադրության ոգին[26]։

Շտապ կարգով կազմակերպվում են մի շարք ծառայություններ, որոնք կոչված էին ապահովելու դիմադրությունը։ Պաշտպանական կառույցների ստեղծումը տևում է երեք օր[27]։ Այգեստանը բաժանվում է յոթ պաշտպանական շրջանների, 79 դիրքերով[28]։ Հայ մարտիկների թիվը հասնում էր 1053-ի։ Նրանք զինված էին տարբեր սիստեմի ու տրամաչափի 505 հրացաններով և 549 ատրճանակներով։ Հակառակորդի ուժերը մոտ 10 անգամ գերազանցում էին հայկականին (հետագայում Կարինից (Էրզրում) և Բաղեշից (Բիթլիս) ուղարկվում է մի քանի գումարտակ ևս)։ Թուրքերը զինված էին ժամանակակից զենքով, գլխավորապես գերմանական արտադրության, և ունեին 12 նորագույն ու մի քանի տասնյակի հասնող ողորկափող թնդանոթներ[29]։

---

20 Հայաստանի Հանրապետության պետական պատկերասրահ, հուշագրաձեռագրային բաժին, ֆոնդ 30, ինվենտար 420, թերթ 410, Փանոս Թերլեմեզյանի հուշերը. այսուհետև՝ ՀՊՊ։

21 C. D. Ussher, G. H. Knapp. Op. cit. p. 251

22 Ա—Դ ո. նշվ. աշխ., էջ 234։ Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 22։

23 ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 407։

24 Ա. Կ ե ո ր կ ի զ յ ա ն. Վասպուրականի հերոսամարտը. Պեյրութ, 1965, էջ 95։

25 R. de Nogales. Four Years Beneath the Crescent, p. 27.

26 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբ., Երևան, 1991, էջ 348։

27 Ա. Ս. Հ ա մ բ ա ր յ ա ն. Վանի 1915 թվականի հերոսամարտը.—ՊԲՀ, 1985, № 2, էջ 33։

28 Ա-Դ ո. նշվ. աշխ., էջ 224, 232։ Տե՛ս նաև՝ J. Bryce. The Treatment of Armenians in Ottoman Empire. London, 1916, p. 35.

29 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 347, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 6, գ. 102, թ. 43, Ա. Ս. Հ ա մ բ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 34, W. D. Allen, P. Muratoff. Caucasian Battelfields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828—1921. Cambridge, 1953, p. 299.

Վանում ինքնապաշտպանությունը սկսելու առիթ է դառնում ապրիլի 7-ի միջադեպը, երբ թուրք զինվորները կրակ են բացում և սպանում մի խումբ հայ կանանց օգնության շտապող երկու երիտասարդների։ Ա-Դոյի պատկերավոր արտահայտությամբ «սկսվեց կռիվը, պայթեց վերջապես շաբաթների, ամիսների, նաև՝ դարերի ընթացքում կուտակված ցասումը, ահազանգ հնչեց, քաղաքը բաժանվեց երկու թշնամի բանակների, մի կողմ կանգնեց տիրող կառավարությունը՝ իր զինական կազմով ու մոլեռանդ մահմեդական տարրերով, մյուս կողմը կանգնեց ճնշված բայան-հայ ժողովուրդը, և վառոդի հոտը բարձրացավ»[30]։ Առաջին օրը մարտը տևում է մինչև ուշ գիշեր։ Հակառակորդը այդ օրը որևէ շոշափելի արդյունքի չի հասնում։ Թուրքերը չեն դադարեցնում հրաձգությունը և հրետանակոծությունը նույնիսկ գիշերը։

Հայ մարտիկներն իրենց համարձակ գործողություններով կարողանում են դուրս մղել թուրքերին և ոչնչացնել նրանց մի շարք դիրքեր ու ամրություններ, որոնք անմիջական սպառնալիք էին ներկայացնում Այգեստանի պաշտպանության համար։

Ինքնապաշտպանությանը մասնակցում էր ողջ ժողովուրդը, անկախ սեռից, տարիքից, կուսակցական պատկանելությունից և հասարակության մեջ գրաված դիրքից։ Գ. Կնապը վկայում է. «...մի մարդ տվեց իր ամբողջ ցորենը՝ իրեն պահելով միայն մեկ ամսվա պաշար՝ ընտանիքի համար։ Ապահովված էր հասարակական փռի աշխատանքը, բաժանվում էին հացի քարտեր, բացվեց տաք կերակուրների խոհանոց։ Օրապարեն էին տալիս մեր տներում (միսիոներական հաստատություններում—Ռ. Ս.) բնակվողներին և դրսում մնացած բոլորին, ովքեր սննդի կարիք ունեին»[31]։ Փ. Թերլեմեզյանն իր հուշերում գրել է. «Բոլոր գործի ստեղծագործական նախաձեռնությունը բխում էր ժողովրդից։ Վանի ժողովուրդը դիշերները լուսացնում էր՝ համառ պայքարը թևավորելու և ցերեկները իր փշուր հացի կտորը բաժանում էր մեր մոտ ապաստանած... ասորի և հայ գյուղացիների հետ»[32]։

Գրեթե բոլոր կողմերից պաշարված, թշնամու անընդհատ կրակի տակ գտնվող վանեցին չէր կորցնում ոգու արիությունը և նույնիսկ նման պայմաններում կարողանում էր հակառակորդից «օգուտ քաղել», նրա «օգնությամբ» լրացնել զինամթերքի պաշարները։ Հայերը նկատել էին, որ երբ թուրքերը արձակում էին պատրույգավոր ռմբագնդեր, դրանք պայթում էին գետին ընկնելուց 15—35 վայրկյան հետո, երբ վառվող պատրույգը հասնում էր լիդքին։ Դա բավական էր լինում, որպեսզի նույնիսկ կանայք ու երեխաները մկրատով կտրեին կամ էլ ջրով հանգցնեին վառվող պատրույգը[33]։

Կռվի ամենաթեժ պահին հայտնվում էր դպրոցական նվագախումբը համ. ինչպես անվանում էին վանեցիները՝ «ֆանֆառը» և հայրենասիրական երգերի կատարմամբ ոգևորում մարտիկներին ու բնակիչներին։ Երաժիշտներից մեկը վերհիշում է, որ տարբեր դիրքերից Զինվորական մարմին էին գալիս կուլավորներ, խնդրելով իրենց մոտ ուղարկել նվագախումբը։ «Դիրքերու մեջ կռվող կտրիճները հացեն ու ջուրեն ավելի ֆանֆառ կը սպասեին»[34]։

Հայերի կատաղի ու անզիջում դիմադրության մասին է վկայում Ռ. դը Նոգալեսը։ Նա հետևյալն է հուշագրում. «Կռվի թափն այնպիսին էր, որ դեպքեր եղան, երբ ստիպված էի հրետանին տեղադրել տներում, քանդելու համար մեր հարևան շենքերը բաժանող պատերը։ Այդ շենքերը գրավվելով,

---

30 Ա—Դ. նշվ. աշխ., էջ 329։

31 J. Bryce. Op. cit., p. 37.

32 ՀՊՊ, ֆ. 30, ինվ. 423, թ. 412։

33 ՀՀ ՊԿՊԱՖ. 242, ռ. 1, դ. 29, թ. 50, C. Г. Ussher. G. H. Knapp. Op. cit., pp. 256—257.

34 Խ. Պուճաքյան. Ֆանֆառը.—«Հայրենիք», Բոստոն, 1940, մայիս, էջ 93։

անմիջապես հրդեհվում էին, որպեսզի հակառակորդը չփորձեր վերագրավել դրանք։ Խանձված մազերով, վառոդից սևացած դեմքերով, գնդացիրների ճարճատյունների ու հրազենի պայթյուններից խլացած ականջներով, հաջողվեց շարունակել մեր առաջխաղացումը դանդաղորեն և անլուր զոհերի գնով, մինչև սիրտը կամակոր քաղաքի...»[35]։

Հայերը, երբեմն, իրենք էին դիմում հակագրոհների, նպատակ ունենալով գրավել կամ ոչնչացնել հակառակորդի դիրքերը։ Ցավոք, որոշ դեպքերում այդ հաջողվում էր կատարել զգալի զոհերի գնով։ Այսպես, կռիվներում աչքի ընկած Քյոմուր Վարդանի խումբը, հերթական մարտական առաջադրանքը կատարելիս, տալիս է յոթ սպանված և ութ վիրավոր[36]։

Թուրքական հրետանին անընդհատ ռմբակոծում էր Այգեստանը, փլատակի վերածելով տները։ Միայն մեկ օրվա ընթացքում հրետանակոծության հետևանքով զոհվում և վիրավորվում են 40 կանայք ու երեխաներ[37]։

Սակայն վանեցիները համառորեն դիմադրում են թշնամուն, զգալի կորուստներ պատճառելով նրան։ Ռ. դը Նոգալեսին ապշեցրել էր հայ մարտիկների քաջությունը։ Նա վկայում է. «Դանդաղորեն և համառորեն հայերը պահում էին քաղաքը, կատաղի հուսահատությամբ պաշտպանվելով իրենց քանդվող... բոցավառվող տներում»[38]։

Չնայած Այգեստանի մարտիկների հերոսական դիմադրությանը, իրադրությունը մնում էր սպառնալից։ Զգացնել էր տալիս պարենի սղությունը։ Թաղամասի բուն բնակչությանը ավելացել էին նաև վիլայեթի զանազան շրջաններից այդտեղ ապաստանած բնակիչները, որոնց նմանապես պետք էր ապահովել սննդով։ Վանի գերմանական որբանոցի տնօրեն Շպյորրիի վկայությամբ, Այգեստանում ուտելիքը բավարարում էր հազիվ մարդկանց գոյությունը պահպանելու համար[39]։

Ստեղծված ծանր դրությունից վանեցիներին կարող էր փրկել միայն ռուսական բանակը։ Այդ էին նշում նաև և՛ ամերիկացի, և՛ գերմանացի միսիոներները. «Կար միայն մեկ հույս քաղաքի համար՝ ռուսների ժամանակին գալը»[40]։ Պարենի ճգնաժամ և զանազան համաճարակային հիվանդություններ առաջացնելու համար Ջևդեթի հրամանով դեպի Այգեստան էին քշվում շրջակա գյուղերի բնակիչները։ Այգեստանում 1915 թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբին մնացել էր 7—8 օրվա պարենի պաշար։ Ք. Աշերը առաջարկում է սովի դեպքում սնվել շներով ու կատուներով, որը հնարավորություն կտա մի քանի օր ևս դիմանալ[41]։

Համաձայն Օսմանյան Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհեյմի հաղորդման, միայն մեկ օրվա ընթացքում թուրքական կորուստները կազմել են 300 հոգի[42]։ Մայիսի սկզբներին թուրքական հարձակումների թափը սկսում է թուլանալ, մայիսի 3-ի երեկոյան հակառակորդը դադարեցնում է Վանի պաշարումը և հեռանում։ Այգեստանի հայության համար պարզ է դառնում, որ թուրքերի հեռանալու պատճառը Վանին մոտեցող ռուսական բանակն ու հայ կամավորական ջոկատներն են։ Թաղամասի ինքնապաշտպանական ուժերը գրավում են թուրքական զորանոցները և այնտեղ թողնված զինամթերքն ու թնդանոթները։ Նվագախումբը հայոց հաղթանակը

---

35 R. de Nogales. Four Years Beneath the Crescent, p 70.

36 Հուշեր Արմենակ Եկարյանի. Գահիրե, 1947, էջ 215։

37 Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 476.

38 R. de Nogales. Memoirs of Soldier of Fortune. New York, 1932, p. 272.

39 Deutschland und Armenien..., S. 481.

40 J. Bryce. Op. cit., p. 38; C. D. Ussher, G. H. Knapp. Op. cit., p. 273; H. Morgenthau. Ambassador Margenthau's Story. New York, 1918, p. 299

41 Հուշեր Ա. Եկարյանի, էջ 211։ Օն. Մխիթարյան. նշվ. աշխ., էջ 160—161։

42 Deutschland und Armenien..., S. 65.

նշանավորում է խրոխտ քայլերգով։ Մարդիկ միմյանց գրկում, համբուրում էին և անընդհատ հարցնում՝ «Ասիկա երազ է, թե իրականություն»[43]։

Այգեստանից առանձին իր դժվարին գոյամարտն էր մղում Քաղաքամեջի հայությունը։ Այստեղ ևս կազմվում է Զինվորական մարմին։ Նրա մեջ ընդգրկվում են Լևոն Գալճյանը, Միհրան Թորամանյանը, Միհրդատ Միրզախանյանը, Սարդիս Շահինյանը, Դավիթ Սարգսյանը, Հայկակ Կոսոյանը (ղեկավար) և Հարություն (Հարո) Ներկարարյանը (բոլորն էլ դաշնակցության անդամներ)[44]։ Միաժամանակ ստեղծվում են մի շարք ծառայություններ, որոնք կոչված էին ապահովելու դիմադրությունը։ Քաղաքամեջի հայությունը զինված էր 101 տարբեր սիստեմի մարտական, 120 որսորդական հրացաններով, 90 «Մաուզեր» ու 120 այլ սիստեմի ու տրամաչափի ատրճանակներով[45]։ Ինքնապաշտպանության մասնակիցներից մեկի վկայությամբ, Քաղաքամեջի համար լուրջ վտանգ էր ներկայացնում բերդը, որտեղից Թուրքերը հնարավորություն ունեին կրակի տակ պահել բավականին մեծ տարածք[46]։

Մարտերը սկսվում են ապրիլի 7-ին, Այգեստանում կռիվները բռնկվելուց մի քանի ժամ հետո։ Քաղաքամեջի հայ մարտիկները ևս կարողանում են հետ մղել հակառակորդի գրոհները։ Հայերին հաջողվում է հրկիզել Թուրքերի կողմից դիրքերի վերածված մի շարք շինություններ։ Այս անհաջողություններից գազազած, թշնամին ուժեղացնում է հրետանային կրակը, օրական արձակելով 300—400 արկ[47]։ Ռ. դը Նոգալեսը, Թուրքերի անհաջողություններն արդարացնելու համար, ճգնում է այդ ամենը բացատրել նրանով, որ հայերն իրենց տրամադրության տակ ունեին բավարար քանակությամբ զենք, որը նրանք կուտակել էին տարիներ շարունակ[48]։ Իսկ ինքնապաշտպանությանը ականատես եղած ամերիկյան միսիոներուհիներից մեկը Քաղաքամեջի հայության հաջողության գրավականը համարում էր նրանց քաջությունը[49]։ Մարտերը, առանց Թուրքերի համար որևէ շոշափելի հաջողության, շարունակվում են մինչև ապրիլի 21-ը։ Այդ օրը երկու բանագնացների միջոցով Ջևդեթ բեյը Քաղաքամեջի ինքնապաշտպաններին առաջարկում է հանձնվել, խոստանալով Թույլ տալ բնակիչներին «անարգել» հեռանալ Պարսկաստան։ Անդրադառնալով վալիի այս առաջարկությանը, Ռ. դը Նոգալեսը հետևյալն է վկայում. «...բոլորս գիտեինք, որ Ջևդեթը ցանկանում էր պատրվակ գտնել հայերին քաղաքից դուրս բերելու համար, որպեսզի հետագայում սպանի ճանապարհին»[50]։

Բարեբախտաբար, վանեցիները չեն կրկնում 1896 թ. սխալը, երբ նրանց մի մասը ջարդվեց, որովհետև հավատալով իշխանությունների խոստումներին, փորձեց Հեռանալ Պարսկաստան։ Հայերի մերժումից հետո ապրիլի 23-ին մարտական գործողությունները վերսկսվում են։

---

43 «Վան-Տոսպ», 1916, ապրիլի 28, № 22—23, էջ 25։
44 Հ. Կոսոյան. Նշվ. աշխ., էջ 54։
45 Նույն տեղում։
46 «Վան-Տոսպ», 1916, 15 մայիսի, № 28, էջ 5։
47 «Վան-Տոսպ», 1916, 19 հունիսի, № 30, էջ 13։
48 R. de Nogales. Four Years Beneath the Crescent, p. 76.
49 G. H. Knapp. Op. cit., p. 17.
50 R. de Nogales. Four Years Beneath the Crescent, p. 90.

Ի զորու չլինելով զինական ուժով ճեղքել Քաղաքամեջի պաշտպանությունը, Ջևդեթի հրամանով շարունակվում է դեպի թաղամաս շրջակա հայկական գյուղերի բռնի տեղափոխումը։ Ռ. դը Նոգալեսի վկայությամբ, վալին այդ քայլին դիմում է այն բանից հետո, երբ կորցնում է Վանը ուժով գրավելու հույսը և որոշում է իր նպատակին հասնել սովի օգնությամբ[51]։

Մարտերը Քաղաքամեջում շարունակվում են մինչև 1915 թ. մայիսի 3-ի երեկոն։ Հաջորդ առավոտը տեղի է ունենում քաղաքի երկու հատվածների հայության այդքան երկար սպասված հանդիպումը։ Ապա մայիսի 5—7-ն ընկած ժամանակահատվածում քաղաք են մտնում հայ կամավորական չոկատներն ու ռուսական բանակը։ Բնակչությունը ցնծությամբ է դիմավորում նրանց։ Հայ մարտիկները ի պատիվ ռուսական բանակի և հայ կամավորական չոկատների, թուրքերից գրավված թնդանոթներից 50 համազարկ են տալիս։

1915 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 4-ը տեղի ունեցած կռիվների ընթացքում, ըստ Էրզրումի գերմանական հյուպատոս Էրվին Շոյբներ-Ռիխտերի, թուրքական կորուստները կազմել են մոտ 1000, իսկ հայերինը՝ 300 սպանված[52]։ Հակառակորդի կորուստներում հաշվի չի առնված հրոսակների խաժամուժը, որն ինչպես հայտնի է, օգտագործվում էր որպես «թնդանոթի միս»։ Այստեղ պետք է ավելացնել նաև թուրքական զինվորական հիվանդանոցում մահացած թուրք զինվորներին։ Նրանց մահվան պատճառը թուրք վիրաբույժն էր, որը սովորություն չուներ ախտահանել վիրաբուժական գործիքները[53]։

Օսմանյան Թուրքիայի կառավարող շրջանները, ինչպես և պատմաբանները ու նրանց կրկնող արևմտյան հեղինակները աշխատում են Վանի ինքնապաշտպանությունը ներկայացնել խեղաթյուրված ձևով։ Հայերի դիմադրությունը բնութագրվում է որպես «կանխամտածված խռովություն» ու դավաճանություն։ Թուրք պատմաբանները ճգնում են ապացուցել, թե Վանի հայերն ունեցել են ռուսների լայն աջակցությունը, զիվերտիաներ են կատարել, զբաղվել են լրտեսությամբ, տեղեկություններ հաղորդելով օսմանյան զորքի թվաքանակի և տեղաշարժերի մասին։ Զարմանալի է, թե նման «խնամքով» մշակված գործողություններ իրականացնող հայերը ինչպե՞ս կարող էին թույլ տալ կոպիտ մի սխալ՝ «ապստամբությունը» սկսել ռուսական զորքի քաղաքին մոտենալուց մեկ ամիս առաջ։ Չէ՞ որ դրանով նրանք վտանգում էին իրենց ձեռնարկման հաջողությունը։ Ինչպես պարզվում է, թուրք պատմաբանները սրա պատասխանը ևս ունեն։ Նրանցից Էսադ Ուրասը գրում է. «Սակայն ապստամբությունն ավելի վաղ բռնկվեց, քան ծրագրված էր»[54]։ Իսկ թե ինչո՞ւ, այդ մասին թուրք պատմաբանը որևէ պարզաբանում չի կատարում, քանի որ այդ ապացուցող որևէ փաստ, որքան մեզ հայտնի է, չկա։

---

[51] R. de Nogales. Four Years Beneath the Crescent, p. 93.

[52] Deutschland und Armenien..., S. 65.

[53] R. de Nogales. Four Years Beneath the Crescent, p. 91.

[54] E. Uras. The Armenians in History and Armenian Question, Istanbul, 1988, p. 867.

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովի 1915 թ. մայիսի 1-ի հեռագրում, ուղղված Լոնդոնի ռուսական դեսպանին, հետևյալն է ասվում. «Կասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունը հարուցել է կոտորածը և ոչ թե ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև մեր զորքերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ» (ընդգծումը մերն է—Ռ. Ս.)[55]։ Թուրք պատմաբանները «մոռացության» են մատնում օտարերկրացի ականատեսների, որոնց թվում նաև Թուրքիայի դաշնակից տերությունների քաղաքացիների վկայությունները։ Դրանք հնարավորություն են ընձեռում ամբողջությամբ հերքել թուրքական կողմի անհիմն մեղադրանքները։ Ե՛վ Շպյորին, և՛ Գ. Սբորդոնին, և՛ Ք. Աշըրը, և՛ Ռ. դը Նոգալեսը մեղադրում են ոչ թե հայերին, այլ երիտթուրքական իշխանություններին, որոնց հայաջինջ քաղաքականության դեմ դուրս եկավ վասպուրականցին։

Իրենց հետազոտությունների արդյունքներից ելնելով, նույն եզրակացությանն են հանգում նաև մի շարք օտար պատմաբաններ։ Անգլիացի պատմաբան Ջեյմս Բրայսը գրում է. «Հայերը Վանում չեն ապստամբել։ Հայերը պարզապես պաշտպանվել են...»[56]։ Նույն կարծիքն են հայտնում նաև անգլիացի Քրիստոֆեր Ուոքերը[57], ֆրանսիացի Իվ Տերնոնը[58], լիբանանցի Մուսա Պրենսը, եգիպտացի Ֆուադ Հաֆիզը[59] և շատ ուրիշներ։

Թուրք պատմաբանները Վանի հայությանը մեղադրում են նաև մահմեդական բնակչությանը կոտորելու մեջ, որը նույնպես չի համապատասխանում իրականությանը։ Վանեցիները չեն կոտորել յուրայինների կողմից լքված թուրք կանանց ու երեխաներին։ Ընդհակառակը՝ հայերը հոգացել են նրանց կարիքները, ապահովելով պարենով և ապաստանով։ Ք. Աշըրը վկայում է. «Այդ տեսակետից հայերը ցույց տվեցին, որ իրենք ավելի շատ մարդկային են, քան թուրքերը... Մենք հիշում ենք, թե ինչպես նրանք համբերությամբ տարել են թուրքերին իրենց ողջ կյանքում։ ...Եվ շատերը չէին վնասում մահմեդականներին և մյուսներից զուսպ էին, որովհետև նրանք ասում էին. «Մենք քրիստոնյաներ ենք»[60]։

Վանը ռուսների կողմից գրավվելուց հետո, ամերիկյան և գերմանական միսիոներները հեռացնում են հալ գաղթականներին, նրանց փոխարեն ընդունելով մոտ 2000-ի հասնող մահմեդական կանանց ու երեխաների[61]։ Շպյորիի վկայությամբ, մահմեդականներին «հայ զինվորները մեզ մոտ էին բերել, քանի որ նրանք հիվանդ էին և ապաստանի կարիք ունեին»[62]։

---

55 Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 340։

56 J. Bryce. Op. cit., p. 627.

57 Chr. Walker. Armenia: The Survival of a Nation. London, 1980, p. 209.

58 Yves Ternon. The Armenians. History of Genocide (Translation from French by R. C. Cholakian). New York, 1981, pp. 213–214.

59 Ն. Վ. Հովհաննիսյան. Հայերի ցեղասպանության լուսաբանությունը արաբական պատմագրության մեջ.—ՊԲՀ, 1989, № 1, էջ 27։

60 C. D. Ussher. G. H. Knapp. Op. cit., p. 285.

61 J. Bryce. Op. cit., p. 41; J. O. Barrows. In the Land of Ararat. London, Edinburgh, 1916, p. 145.

62 Deutschland und Armenien..., S. 483. Նույնի՝ Der Todesgang des Armenischen Volkes, S. 96.

Ա. Եկարյանն այդ առիթով հետևյալն է վերհիշում. «Թուրքերը անչափ հապճեպով հեռացած էին... Անկողիններու մեջ մոռացած էին նույնիսկ երեխաները, որոնք աղմուկեն կ'արթնանային, զարմացած կը հարցնեին, ո՞ւր է մայրիկը»։ Վանեցիները բոլորին հավաքում և ուղարկում են ամերիկյան միսիոներների մոտ[63]։

Հայաստանի Հանրապետության կենտրոնական պետական արխիվում պահպանվել է մի ուշագրավ փաստաթուղթ։ Դա Ք. Աշըրի և Է. Ցարոուի նամակն է, ուղղված Վանի նահանգապետ Ա. Մանուկյանին։ Միսիոներները խնդրում էին օրական տրամադրել հինգ ոչխար, իրենց մոտ ապաստանած մահմեդականներին պարենով ապահովելու համար[64]։ Հետագայում վերադառնալով ԱՄՆ, միսիոներուհի Գ. Մաք Լարենը, որին իր ընկերուհու հետ Ջևդեթը ստիպել էր մնալ հոսպիտալում թուրք վիրավորներին խնամելու համար, Ք. Աշըրին հաղորդում է վալիի շնորհակալությունը՝ Վանում մնացած թուրք բնակչությանը ապաստան տալու համար[65]։

Վերը բերված վկայությունները գալիս են կրկին ու կրկին հաստատելու, որ ո՛չ Վանում և ո՛չ էլ վիլայեթում մահմեդականների կոտորածներ տեղի չեն ունեցել։ Այս ամենը թուրք քաղաքական գործիչների և պատմաբանների հորինածներն են։

Հանդես գալով Վան մտած ռուսական բանակի հրամանատարության պատվին կազմակերպված ճաշկերույթում, Ա. Մանուկյանը ասել է. «Երեք ամիս առաջ մենք հույս չունեինք ռուս զորքի գալու վրա։ Մեր դրությունը անելանելի էր. կամ թույլ տալ, որ մեզ մորթոտեն ոչխարների պես, կամ կործանվել «Տիտանիկ» նավի նման երաժշտության հանդիսավոր հնչյունների տակ։ Մենք գերադասեցինք վերջինը և մենք կը կործանվեինք, բայց մեզ օգնության եկաք դուք, եկաք անսպասելի կերպով և մեր հաղթանակի կեսը ձեզ ենք պարտական»[66]։

Սիմոն Վրացյանի բնորոշմամբ, Վասպուրականի հերոսամարտին հատուկ է եղել համերաշխության ոգին, իսկ «միությունը ուժ է» կարգախոսը գործնականում կիրառվեց։ Նա գրել է. «Կռվեցին, այո, Ջևդեթի ոհմակներու դեմ և կարող եմ ասել, որ լավ կռվեցին։ Հաղթեցին, բայց դրան նպաստող միայն վասպուրականցու անվեհերությունը չէր, այլ նաև հայ կամավորներու և ռուս բանակի ճիշտ ատենին հասնելն էր»[67]։

Իսկ Նիկոլ Աղբալյանը հետևյալ կերպ է արժեքավորում Վանի հերոսամարտը. «Վանի ինքնապաշտպանությունը մեր նորագույն պատմության փառավոր դրվագներից մեկն է անշուշտ։ Վանեցիներն այդ գործով փառք վաստակեցին և հանձնեցին հայոց պատմության, որ կը մնա անկորուստ, որչափ հայն ապրի»[68]։

---

63 Հուշեր Ա. Եկարյանի, էջ 229։

64 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց, 1, գ. 34, թ. 1։

65 C. D. Ussher, G. H. Knapp. Op. cit, p. 331.

66 «Մշակ», Թիֆլիս, 2 հունիսի 1915։

67 Վարագ բացառիկ. նվիրված Մեծ եղեռնի և Վանի հերոսամարտի 50-ամյակի տարեդարձներուն, 1915—1965. Բեյրութ, 1965, էջ 156։

68 Ն. Աղբալյան. Հին ու նոր ապրումներ.—«Հայրենիք», Բոստոն, 1940, մայիս, էջ 4։

Վասպուրականի ինքնապաշտպանության հաղթական ավարտը խիստ ոգևորեց նաև Հայոց մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանին, որը այն համարեց մեր ժողովրդի գոյամարտի փայլուն էջերից մեկը[69]։

САМООБОРОНА ВАНА В 1915 ГОДУ

Р. О. СААКЯН

Резюме

В годы первой мировой войны, когда пантюркистское правительство младотурок осуществляло политику геноцида армян в Османской империи, армянское население ряда городов и районов было вынуждено прибегнуть к самообороне. Так поступили армяне Муша, Сасуна Шапнн-Карахисара, Урфы и других местностей. Особенно ожесточенные бои развернулись в провинции Вана в конце апреля—начале мая 1915 года. Благодаря русской армии и армянским добровольцам, подоспевшим на помощь, армянское население города Вана и его округи было спасено от неминуемой гибели. Героическая оборона Вана является одной из самых блестящих страниц новой истории армянского народа. Говоря о «восстании» в г. Ване, Г. Моргентау утверждал, что это было придумано младотурками, с целью оправдания уничтожения целого народа. Ф. Нансен, отмечал, что в г. Ване армяне не восстали, а только прибегли к самообороне. В телеграмме министра иностранных дел царской России С. Сазонова, адресованной русскому послу в Лондоне, отмечалось: «Нет сомнения, что восстание армян в Ване вызвано резней, а не наоборот, потому что для армян не имело смысла начинать до прихода наших войск движения против превосходных сил турок» Немецкий вице-консул в г. Эрзеруме Э. Шойбнер-Рихтер в своем докладе от 15 мая 1915 г. писал, что причиной самообороны армян была арменофобская политика турецких властей. Очевидец ванских событий, американец К. Ашр говорит о самообороне армян. По мнению Йог. Лепсиуса, причиной самообороны ванских армян были варварские действия Энвера паши. Ливанский историк М. Пренс считает, что в Ване первыми напали турки; его египетский коллега Ф. Хафиз писал: «В апреле 1915 г. в Ване армяне не поднимали мятеж, они только защищали свою жизнь от нападающих османских сил». Героическую самооборону признал и Р. де Ногалес, немецкий офицер, служивший в турецких войсках и участвовавший в осаде армянских кварталов г. Вана. По его признанию: «Армяне отчаянно оборонялись в руинах своих пылающих домов, сражались до последнего вздоха за свободную Армению и за победу святого креста».

---

69 «Հորիզոն», Թիֆլիս, 15 մայիսի 1915։